

## ՄԱՅՐԵՆԻՔ

**Օլգա Գանժա (Նիդերլանդներ)**  
**Վերոնիկա Բաբայան (Նիդերլանդներ - Հայաստան)**  
**Տաթևիկ Ղուկասյան (Ռուսաստան - Հայաստան)**  
**masharu (Նիդերլանդներ)**

**Համադրող՝ Սուսաննա Գյուլամիրյան (Հայաստան)**

**Երևանի ժամանակակից արվեստի թանգարան**  
**Սեպտեմբերի 18-28, 2021**

**Նախագիծը իրականացվել է «Արվեստի և մշակութային ուսումնասիրությունների լաբորատորիա» կազմակերպության միջազգային ծրագրերի շրջանակում**

Մայրենիքը՝ իր զանազան մեկնաբանություններով՝ Մայր հող, Մայր աստվածուհի, մայրություն, հերոսուհի մայր, հայրենիք, հայրենասիրություն, քաղաքացիություն և ազգություն, Վերոնիկա Բաբայանի, Օլգա Գանժայի, Տաթևիկ Ղուկասյանի և masharu-ի համատեղ միջազգային նախագծի արվեստագիտական վերաքննության և անդրադարձի թեման է:

Ցուցահանդեսը քաջալերում է ավելի քննադատական արձագանք Հայաստանում կանանց և երիտասարդ աղջիկների նկատմամբ գործող հայրիշխանական ճնշման նկատմամբ՝ համաձայն որի՝ նրանք պետք է ընդունեն իրենց դերը՝ որպես վերարտադրության գործիքների, որպես ծնող տղաների, որոնք այնուհետև պետք է մեծանան ու դառնան զինվորներ: Այս հասարակության մեջ հասունացող կինը շարունակ լսում է այն մասին, որ իր առաքելությունը սեփական արգանդում «ինչքան կարելի է շատ հայ տղաներ» բեղմնավորել ու ծնելն է: Այս տիրապետող գաղափարաբանությանն ընդիմանալը կարող է ընկալվել որպես հակահայրենասիրական, ազգի ապագային ծառայելուց հրաժարվելու արարք: Ինչքան էլ որ արդարացվի հայերի՝ վերացման վախը, կանայք չեն կարող ընդունել այն բանը, որ իրենց գոյության գլխավոր կամ առավել ևս՝ միակ նպատակը համարվի գենդերային առումով ընտրողական վերարտադրությունը: Ներկա աշխարհում կանայք այլևս չեն որորշվում կամ վավերացվում առողջ տղաներ ծնելու իրենց ունակությամբ:

Վաղ շրջանի ֆեմինիստ հեղինակներից երկուսը՝ Ադրիեն Բիչը և Սառա Բադիքը, արմատական կարծիք են հայտնել մայրության պատմական կառուցարկման վերաբերյալ (1972-1996):

Բիչը փառաբանում է մայրությունը որպես միջոց՝ ներգրավվելու հակապատերազմական ակտիվիզմի մեջ, իսկ Բադիքը հանդես է գալիս մայրության՝ որպես խաղաղության քաղաքականության ջատագով:

Որոշ դիսկուրսներ կանանց կապում են հատկապես շրջակա միջավայրին, նրանց՝ որպես սնողի ու խնամողի ավանդական սոցիալական դերի պատճառով:

Որոշ էկոֆեմինիստ ուսումնագետներ, գիտնականներ նկատում են, որ կանանց բնությանն առնչելու պատճառն այն չէ, որ նրանք կին են կամ «կանացի», այլ որովհետև, բնության նման, ճնշված վիճակում են գերազանցապես տղամարդկային ուժերի կողմից: Մարգինալացումն ակներև է գենդերացված լեզվում, որ օգտագործվում է բնությունը նկարագրելու համար՝ Մայր հող կամ Մայր բնություն, և կանանց նկարագրելիս օգտագործվող կենդանական լեզվում: Այսպես մտածող էկոֆեմինիստները կարծում են, որ այս կապերը ի ցույց են դրվում «կանացիության» հետ զուգորդվող սոցիալապես վերագրվող այնպիսի արժեքների հարակցությամբ, ինչպիսին է սնող հատկությունը, որ ունեն ինչպես կանայք, այնպես էլ բնությունը:

Խորհրդային միության համատեքստում Մայր-Մայրենիքի քանդակները, որոնց ուսումնասիրությամբ զբաղվել է Օլգա Գանժան Ուկրաինայում, Ռուսաստանում, Վրաստանում և Հայաստանում, օգտագործում են «Մեծ մայրերի» պատկերների արդի ներկայացումները, որ զուգորդվում են բեղմնավորության, ծնունդի, կյանքի ու հովանավորության հետ: Մայր հողի պատկերները որպես միասնության խորհրդանիշ՝ հիշատակում են նաև զինվորներին, որոնք զոհվել են «հողի» պաշտպանության համար, դրանք նաև խորհրդանշում են «հայրենասիրություն»՝ դրանում զետեղված իշխանության ամբողջ դիսկուրսով, որի մեջ լսվում են պատերազմների, ինքնազոհաբերության ու նվիրականացված բռնության արձագանքներ:

Վերոնիկա Բաբայանն օգտագործում է կանանց ավանդական պրակտիկաներ՝ հետազոտելու համար անդրսերնդային (սերնդից սերունդ փոխանցվող, transgenerational) տրավմա հասկացությունը և հասկանալու, թե ինչպես է մայրական խնամքը գործառուում որպես մտապահման հարմարանք երեխայի ինքնության ձևավորման գործում: Նրա աշխատանքում թթու լավաշի պատրաստման ավանդույթը, դուրս ելնելով ավելի ընդարձակ հավաքական հիշողությունից, ծառայում է որպես նավ, որի միջոցով անդրսերնդային տրավմայի ոչնչացված վկայությունները շրջանառում են տարածքից, լեզվից ու քաղաքացիությունից անդին:

Սեփական հետազոտությունների արդյունքում masharu-ն սկսեց մտածել Երկրի մասին որպես անցողիկ տարրի «աշխարհի քաղաքացու» ինքնության նախագծման գործում: Առաջնորդվելով անտիկ պրակտիկաներով՝ masharu-ն ուսում է երկրների հողը, ուր նա գնում է, որպես միջոց կապելու իրեն տարբեր երկրների հետ: Ինչ-որ իմաստով՝ բազմաթիվ երկրների ուտելի հողեր ուտելով՝ նա հարստացնում սեփական կենսաբանական և հոգևոր կառուցվածքը «աշխարհի քաղաքացի» դառնալու ճանապարհին: Ուստի՝ «Ուտելի հողի թանգարանի» մոտեցումը կապվում է Մայր հողի ավելի ընդհանուր պատումին՝ տրամադրելով բոլոր անհատներին առանց խտրականության:

Տաթևիկ Ղուկասյանը հետազոտում է հայոց եղեռնի հավաքական տրավման՝ դրան նայելով Երկրի հետ տարբեր փոխհարաբերությունների ուսանյակներով՝ «հողն ունենալը» ընդդեմ «Երկրին պատկանելուն»: Թեև տրավմատիկ փորձառությունը արմատացած է «կորսված հողի (Երկրի)» ցավի և առ այդ հողը կարոտի մեջ, Երկրի հետ կապի զգացողությունը, ինչպես կարծում է արվեստագետը, ընդհակառակը, կարող է դառնալ բուժող և հաշտեցնող միջոց: Տաթևիկը պատմում է դեպի Թուրքիա կատարած ճամփորդության մասին, որտեղ նա կատարել է Երկրի հետ վերամիավորվելու և տրավմատիկ իրադարձությունների հետ հաշտվելու ծես ծառեր տնկելով և զոհերին հիշելով:

Միջմշակութային երկխոսությունների համատեքստում արվեստագետները հետազոտում են Երկրի (Հողի) սիմվոլիկան՝ տարածելով այն Մայրենիքի և Մայր հողի հակադիր գաղափարների միջև, մեկը՝ քչերի համար է, մյուսը՝ շատերի: Արվեստագետները հարցնում են, թե ինչ է նշանակում հարաբերվել Հողի հետ և խնամել այն՝ արձագանքելով էկոլոգիական ճգնաժամի և ազգայնականության աճի ընթացիկ քաղաքական իրավիճակին: Այնուհետև, հարցման ենթարկել Հողի գենդերը, առնչելով ոչ հայրիշխանական կառուցվածքներին՝ ընդդեմ օգտագործմանն ու շահագործմանը կապիտալիստական համակարգում:

**Օլգա Գանժան** (Վոլգոգրադ, 1981) ռուս մուլտիմեդիային արվեստագետ է, որն այժմ ապրում և աշխատում է Հոլանդիայում: Նա լեզվի և գրականության մագիստրոսի կոչում ստացել է Վոլգոգրադի պետական համալսարանում (ՌԴ), իսկ գրաֆիկական դիզայնի բակալավրի կոչում՝ Սենտ Ջուստ արվեստի ակադեմիայում (Հոլանդիա): Այժմ Օլգան աշխատում է ինքնուրույն նախագծերի վրա՝ տարուբերվելով դիզայնի և

արվեստի միջև սահմանագծի վրա: Աշխատանքներում նա հաճախ ձգտում է հավասարակշռության՝ կապելով իրար հետ կապ չունեցող տարրեր, կամ տարբեր տիրույթների տարրեր միջբնագավառային եղանակով, ծիսականացնելով պատմության և մշակույթի անձնական հիշողությունները՝ հաղորդելով «արվեստանման» ձևեր:

Օլգա Գանժան բազմիցս եղել է ռեզիդենտ -արվեստագետ, մասնակցել մի շարք ցուցահանդեսների և համագործակցային նախագծերի Եվրոպայում, Աֆրիկայում և նախկին խորհրդային երկրներում:

**Վերոնիկա Բաբայանը** (Մյունխեն, 1994) արվեստագետ է, գրող և ուսուցիչ, որի աշխատանքն ի հայտ է գալիս Հայաստանի և Հոլանդիայի միջև: Նա օգտագործում է մետաինքնակենսագրական մոտեցում՝ ուսումնասիրելու համար մանկավարժության տեսակները, որ ազդում են ազգային ինքնության անդադար արտադրության վրա: Անդրադառնալով մայրությանը՝ նա աշխատում է հավաքական հիշողությունների հետ, որ տալիս են այլընտրանքային բացատրություններ լայնորեն ընդունված պատմությունների համեմատությամբ: Օգտագործելով կանանց ավանդական պրակտիկաներ, նա շեշտում է ֆեմինիզմի դերը՝ սասանելու գերիշխանական հեղինակությունը հայրենասիրական հիշողության մեջ: Վերոնիկան կարողանում է հակամարտ պատմությունների համար ընդհանուր տարրերի, նշանների ու խորհրդանշանների միջոցով, բացահայտել, թե դրանք ինչպես կարող էին անցնել ազգայնական պատումներից անդին և ստեղծել տարածություններ միջտարածքային պատկանելության համար: Վերոնիկա Բաբայանը սովորել է Երևանի Գեղարվեստի պետական ակադեմիայում, այնուհետև՝ Վիլլեմ դը Կոնինգ ակադեմիայում (Ռոտերդամ) և մագիստրոսի կոչում ստացել Սանդբերգ ինստիտուտում (Ամստերդամ), 2020թ.: Նա եղել է Քննադատական ուսումնասիրությունների հրավիրված դասախոս Վիլլեմ դը Կոնինգ ակադեմիայում և այժմ հանրային ծրագրերի համա-համադրող է Մելլի արվեստի ինստիտուտում (Ռոտերդամ): Հիմա նա աշխատում է իր ավարտական աշխատանքի տպագրության վրա՝ «Սիրելի մայր: Պատկանելության հոսուն մեխանիզմներ»:

**Չր. masharu-ն** (Մոսկվա, 1984) մաթեմատիկական կրթությամբ ստեղծագործող է: Նրա նախագծերը միավորում են գիտական հետազոտությունը անձնական փորձառության և մշակութային պրակտիկայի հետ: 2011-ին masharu-ն դոկտորի կոչում է ստացել պատկերների մաթեմատիկական անալիզի տիրույթում Էյնդհովերի տեխնոլոգիական համալսարանում և ավարտել է Ամստերդամի լուսանկարչության ակադեմիան: 2013-2014թթ. նա եղել է ռեզիդենտ Rijksakademie van Beeldende Kunst-ում (Ամստերդամ): 2018-ին նա ընկերակից արվեստագետ էր Հոլանդիայի Հումանիտար և սոցիալական գիտությունների առաջացած ուսումնասիրությունների ինստիտուտում (NIAS-KNAW): masharu-ի աշխատանքները ցուցադրվել և հրապարակվել են Ավստրալիայում, Ավստրիայում, Չինաստանում, Խորվաթիայում, Կուբայում, Չեխիայում, Դանիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Գվատեմալայում, Ինդոնեզիայում, Իտալիայում, Ղազախստանում, Կիրգիզիայում, Հոլանդիայում, Նիգերիայում, Պորտուգալիայում, Ռուսաստանում, Հարավային Կորեայում, Իսպանիայում, Սուրինամում, Շվեդիայում, Ուկրաինայում, Միացյալ Թագավորությունում և Միացյալ Նահանգներում այնպիսի վայրերում և իրադարձություններում, ինչպիսիք են Աֆրիկայի արվեստագետների հիմնադրամը Լագոսում, Իսպանական մշակութային կոնտրոնը քաղաք Գվաթեմալայում, Դիզայնի համաշխարհային հավաքը Էյնդհովենում, Բեդիթեքս ցուցասրահում (Պարամարիբո), Զակարտայի ժամանակակից խեցեգործության բիենալեն (Զակարտա), Եվրոպական խեցեգործության կենտրոնը (Օստերվիլյ), Sustainica-ն Դյուսելդորֆում, Հոլանդական

Տռանանատուրալ փառատոնում, (Ամստերդամ), Ժամանակակից արվեստների Մոսկվայի 6-րդ բիենալեում և Բիլբաոյի Ծովային թանգարնում:

2021-ին masharu-ի «Ուտելի հողի թանգարան» նախագիծը աջակցություն է ստացել հետևյալ կազմակերպությունների կողմից` Creative Industries Fund NL, Tjil Fonds, Prins Bernhard Cultuurfonds:

Արվեստագետի աշխատանքային պրատիկային աջակցում է Մոնդրիան հիմնադրամը (Mondriaan Fund).

**Տաթևիկ Ղուկասյանը** (Երևան, 1984) արվեստագետ է, ֆասիլիտատոր, մարմնացածության թերապևտ (embodiment therapist) և մարզիչ՝ սկզբնական փորձառությամբ մարդու իրավունքների և խաղարարության բնագավառում: Նա ծնվել է Հայաստանում, 9 տարեկանում իր ընտանիքի հետ տեղափոխվել է Ռուսաստան: Տաթևիկը մեծացել է Մոսկվայում և ստացել լեզվաբանության և միջմշակութային հաղորդակցության մագիստրոսի կոչում, իսկ ավելի ուշ սովորել է Ռուսաստանի Հումանիտար գիտությունների պետական համալսարանի սոցիալական փիլիսոփայության ծրագրում: Ի թիվս այլ աշխատանքների՝ նա դասավանդել է համալսարանում, համադրել կրթական, մշակութային և խաղարար նախագծեր, աշխատել թիմերի ու համայնքների հետ մարդու իրավունքների, խորը էկոլոգիայի (deep ecology) և մարմնացած հակամարտության լուծման թեմաների շուրջ: Տաթևիկը համահիմնադիրն է «Եզրածի վրա» նախագծի, համախմբագիրը «Կարելի է իմանալ մի պատերազմի պատմություններ» վավերագրական գրքի և «Ընկղմման ձայներ» ֆիլմի: